Իսաբեկյան Ա. – Վեհը և գեղեցիկը – թերթ, «Կրթություն», Ե., 25.10.2006

Իհարկե, նախ արվե՛ստն է վեհ ու գեղեցիկ: Չկա՛ կրթություն՝ առանց վեհի ու գեղեցիկի գաղափարաբանության: Չկա՛ գիտելիք՝ առանց արվեստի ու գրականության: Չկա՛ դաստիարակություն՝ առանց գեղագիտականի… Պարզ ճշմարտություններ են սրանք՝ բոլորիս համար ընկալելի և ընդունելի: Բայց՝ կատարելի՞ արդյոք… Ո՞ւմ համար են Երևանի պետական պատկերասրահը, Հայաստանի պատմության թանգարանը, օպերայի և բալետի թատրոնը, մյուս մշակութային օջախները: Չբոսաշրջիկների՞… Այդ դեպքում Հայաստանը իրո՛ք կդառնա միայն թանգարան բաց երկնքի տակ և ոչ՝ երկիր՝ կենդանի ու զարգացող: Արվեստի հաստատությունների մշտական այցելուները պիտի մեր սանե՛րը լինեն:

…Տե՛րը լինենք մեր ունեցածի, հոգատա՛ր տերը և նաև հոգատար հայր, մայր, սրտացավ ուսուցիչ լինենք մեր երեխաների համար. մեր զավակներին դարձնենք ոչ միայն առողջ ու բարետես, այլև՝ վեհի ու գեղեցիկի կրողներ: Չծուլանանք, շաբաթը գեթ մեկ անգամ նրանց տանենք թատրոն, պատկերասրահ, թանգարան… Թող ճանաչեն Ռաֆայելին ու Միքելանջելոյին, Սարյանին ու Բաշինջաղյանին, Կոջոյանին ու Քոչարին, թող լսեն Մոցարտի ու Բեթհովենի, Վերդիի ու Վիվալդիի ստեղծագործությունները, որ հասկանան ու սիրեն Կոմիտասին… Թող կարդան Շեքսպիր ու Դանթե, Մոլիեր ու Մարկես, Լոնդոն ու Տվեն… Դժվա՞ր է: Անհնարի՞ն է: Բնավ՝ ոչ: Սկսենք մեզանի՛ց. կարդանք, որ կարողանանք կարդալը քարոզել, դիտենք, ունկնդրենք, որ կարողանանք դիտելու ու լսելու կարողություն զարգացնել: Զգտենք Կատարյալին՝ Աստծուն մոտենալ, ինչպես ավանդում էր մեծ Նարեկացին… Դժվար չէ, փորձենք ու կկարողանանք վեհով ու գեղեցիկով հրաշքներ գործել, Հրաշքի պատրաստ սերունդ կրթել: